

ՏԻԵՇԵՐԱԿԱՆ ՄԵՏԱԼՈՒՐԳԻԱ

Է. ԽՈՎՀՅՈ

Տեխնիկական գիտությունների
թեկնածու

Մարդու կողմից նվաճված ամեն մի տիեզերական մարմին ժամանակի ընթացքում, ըստ երևոյթին, կվերածվի բազայի, որը կծառայի հետագա էլ ավելի հեռավոր միջաստղային ռեյսերի: Այդպիսի բազայի սարքավորումը, ստարտային հրապարակների, տանող-հրթիռների և հենց իրենց տիեզերանավերի կառուցումը կպահանջն հսկայական քանակությամբ նյութեր և, ամենից առաջ, մետաղներ, ըստ որում ոչ միայն բարձրորակ, այլև շարքային պողպատ:

Իսկ հնարավոր չէ՝ արդյոք մետաղ արտադրել անմիջապես կուսնի և տիեզերական այլ մարմինների վրա:

Ինչպես ածխածնի պաշարներ, այնահետ էլ երկաթի կուտակներ պետք է որ լինեն կուսնի վրա:

Գազերի խոռոչյունը կուսնի մակերևույթի մերձակա մասում մոտավորապես տաս տրիլիոն անդամ ավելի փոքր է, քան մթնոլորտի մերձերկրյա շերտերի խոռոչյունը: Նման պայմաններ կարող են լինել նաև մյուս ոչ մեծ տիեզերական մարմինների, օրինակ, Մերկուրիի վրա:

Այդ պատճառով հատկապես կարեվոր է լուծել այն հարցը, թե հնարավո՞ր է առհասարակ, որ մետալուրգիական պրոցեսներն ընթանան առանց մթնոլորտի:


Բայց, եթե չկա մթնոլորտ, չկա

թթվածին, նշանակում է չի կարող լինել նաև վառելանյութի այրում: Ուրեմն մտածել անգամ շարժե այդ պայմաններում պողպատի ստացման դոմենյան, մարտենյան կամ կոնվերտորային պրոցեսների մասին:

Եթե չկա մթնոլորտ, ուրեմն չկա և ջուր, որն անհրաժեշտ է մետալուրգիական ագրեգատների սառեցման համար:

Մաքուր երկաթի հալման ջերմաստիճանը ըստ Ցելսիուսի 1350° է: Բայց լուսնային պայմաններում $700-900^{\circ}$ -ում արդեն գեռես պինդ երկաթի կակսի ինտենսիվորեն գոլորշիանալ, ցնդել, պինդ վիճակից անմիջապես անցնելով դազայինի: Ուրեմն ո՛չ հեղուկ երկաթ կարելի է ստանալ, ո՛չ էլ ծովազանդվածի շիկազլոցում կատարել:

Բայց այս բոլորը միանգամայն հաղթահարելի խոշնդոտման են: Քիմիական վառելանյութին փոխարինելու կզան ատոմային ու արեգակնային էներգիան, և մետաղների փոխարկումը գոլորշու խոշնդոտից կիրածվի առավելության: Գոլորշիներն, ըստ երեվույթին, կգրավեն հալույթի տեղը, և դա տեղի կունենա շատ ավելի ցածր շերմաստիճաններում, քան սովոր են մետալուրգները երկրի վրա: Ուրեմն կարելի կլինի յուլա գնալ առանց ջրային պաղեցման:



Լուսնային պայմաններում պողպատի ստացման սխեման մոտավորապես այսպիսի տեսք կարող է ունենալ (վերևի նկարը):

Փակ գոլորշացուցիչն անընդհատ լցվում է բռվախառնուրդով, որն իրենից ներկայացնում է երկաթի և այլ մետաղների, օրինակ սիլիցիումի և ալյումինի օքսիդների խառնուրդ (մոտավորապես նույն բաղադրությունն ունեն երկրային հանքաքարերը)։ Գոլորշացուցիչում բռվախառնուրդը շեկացվում է մինչև 700—1000 աստիճան, այն հաշվով, որ ապահովվի երկաթի օքսիդների ընտրարար գոլորշիքացումը և մյուս մետաղների, օրինակ, սիլիցիումի և ալյումինի պակաս ցնող օքսիդների պարունակությունը գոլորշիներում հասցվի նվազադույնի։ Այս ձևով ստացված գազն անց է կացվում կարբիդային նյութի բեկորներով լցված հորանով, որի ժամանակ գազի բաղադրության մեջ մտնող թթվածինն ակտիվորեն միանում է ածխածնի հետ, և հորանից արդեն դուրս է զալիս երկաթի, ածխածնի ու շմոյի գոլորշիների խառնուրդ։ Այս խառնուրդը մտնում է կոնդենսատորի մեջ, ուր

գազի դժվարահալ բաղադրամասերը (երկաթ և ածխածնին) շփվելով անձայր ժապավենի սառը մակերեսութիւն անցնում են պինդ վիճակի և նըստում նրա վրա։ Իսկ շմոյի գազը կարելի է բաց թողնել, օրինակ, լուսնի «մթնոլորտի» մեջ։

Եարժական ժապավենի վրա աստիճանաբար ձևավորվող նախաշինվածքն այնուհետև ընկնում է զրտնակների տակ, ուր ընդունում է պատրաստի շինվածքի վերջնական ձև։

Բարձրացնելով կամ իջեցնելով հորանի չերմաստիճանը կարելի է մեծացնել կամ փոքրացնել ածխածնի պարունակությունը գազում, հետևաբար և շինվածքում։

Այսինքն այժմ երկրի վրա էլ պողպատի վակուումային մշակումը խիստ բարձրացնում է նրա որակը։ Բայց դա մեծածավալ և թանկարժեք սարքավորումների ստեղծման հետ է կապված։ Իսկ, օրինակ, լուսնի պայմաններում, վակուումը մենք «ձրի» ենք ստանում։

Մետաղի արտադրությունը լուսնի կամ տիեզերական այլ մարմինների խորը վակուումի պայմաններում թույլ կտա պատրաստել իրենց ամրու-

թյամբ, պլաստիկությամբ և այլ հատկություններով իրոք որ ոչ երկրային պողպատներ ու միահավածքներ, որոնք չեն պարունակի գաղեր և ոչ մետաղային ներխառնուկներ: Իրականում մետալուրգիայի համար պայմաններն անբարենպաստ են ոչ թե կուսնի, այլ երկրի վրա, որն ունի թթվածնով հագեցած խիտ մթնոլորտ:

Տիեզերքում քիչ չեն մթնոլորտազուրկ մարմինները: Դրանցից շատերի վրա կարող են լինել բարենպաստ պայմաններ բարձրորակ մետալուրգիայի զարգացման համար: Այնպես, որ հազիվ թե տիեզերական տարածության նվաճմանը զուգընթաց անհրաժեշտություն ծագի նրա տարրեր անկյունները փոխադրել երկրի վրա պատրաստված մետաղներն ու միահավածքները: Ընդհակառակը: Լուսինը և մյուս մթնոլորտազուրկ երկնային մարմինները ժամանակի ընթացքում կկարողանան շարքային և բարձրորակ մետաղներով բավարարել ոչ միայն տիեզերական թոփշքների կարիքները, այլև կականի բրենց մետալուրգիական արտադրանքը մատակարարել երկրին ու մյուս

այն մոլորակներին, որոնք ունեն մըթնոլորտ և Հարդկային կյանքի համար բարենպաստ, ուստի և մետալուրգիայի զարգացման համար անբարենպաստ պայմաններ:

Հստ որում պետք է հաշվի առնել, որ կուսնից երկիր, օրինակ, բհոք միքանի անգամ ավելի հեշտ է փոխադրել, քան երկրից կուսին: Չէ որ ժանրության ուժի արագացումը կուսնի վրա և անգամ ավելի փոքր է, քան երկրի վրա:

Հնարավոր է, որ վաղ թե ուշ վերացվեն մեր մոլորակի մետալուրգիական գործարանները, որպես անշահութաբեր և մարդու առողջության համար վնասակար օբյեկտներ:

Լիովին կփոխվի մետալուրգների աշխատանքի բնույթը: Եվ պողպատագործներին կպատկերեն ոչ թե վառարանի տոթից պաշտպանող կոպիտ հագուստով ու մետաղի նմուշ վերցնելու պապենական հսկա գդալով, այլ տիեզերագնացի հագուստով. և մետալուրգիական պրոցեսները նրանք կհեռուավարեն արբանյականավից կամ մթնոլորտազուրկ մոլորակի վրա կառուցված հատուկ պատսպարանից:

